

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԵՆ ՄԵԿՂ ՊՈՒԼԿԱՐԻՈ ՄԵՋ՝

Սոֆիայի «Քիրիլ և Մեթոդի» ազգային մատենադարանը բազմաթիվ արժեքավոր հնագրային ձեռագրեր է պահպանում և հնատիպ գրքերու կողքին խնամքով կպահպանե և հին հայկական ձեռագիր գիրք մը, որ միակն է այնտեղ և ծանոթ է որպես հայկական ավետարան XIII դարին, համարակալված 1 համարին տակ՝ հետևյալ վերտառութիւնով. «Арменско четвероевангелие от XIII века».

Այդ ձեռագիր ավետարանը կրակալանա 267 մագաղաթյա երկծալ թերթերի: Անոր մեծութիւնը 28,5×23,5×10 սմ չափերով է: Էջերը երկսլուծ գրութիւն կպարունակեն՝ 21,5×17, սմ ծավալով: Տողերը՝ 17: Մագաղաթը հաստ է՝ բացառութեամբ առաջին ու վերջին յորս թերթերուն, որոշ չափով գորշացած, սակայն հստակ ընթերցելի գրութեամբ: Ձեռագիրը կազմված է, կազմը կաշնպատ տախտակ է: Երեսակողմի կաշին գորշված է հյուսքազարդերով, որոնք քառանկյունի մը կկազմեն, որոնք մեջտեղը խալ մը տալով է՝ նույնպես հյուսքանախ: Կազմի կաշին տարբեր տեղեր մաշած է և անոր վրա մանր ծակեր գոյացած են՝ կաշեկեր վնասատուներն: Կողքի կաշին ընդհանուր կազմին կպատկանի, բայց կողքամասն անշտալված է: Առասանները լավ պահպանված են և ամբողջ ձեռագիր գրքին պիրկ ու անբաժան վիճակ մը կպահպանեն: Թերթերու լուսանցքները և վարի անկյունները մասնահետքեր գորշացած, մասամբ կեղտոտած և մաշած են, հատկապես առաջին թերթերը: Ավետարանի վերջին թերթի (267-րդը) վարի արտաքին քառորդ մասը կտրված է, իսկ մնացյալ մագաղաթահատվածը կառչած է ավետարանի կազմին և պարապ է՝ գրչութեան հետքեր այնտեղ չկան: Ավետարանի գրերը ուղղահայաց են, 0,5 սմ բարձրութեամբ, իսկ գլխագրերը՝ 1—1,2 սմ, երբեմն մինչև 2 սմ բարձր, գրատեսակը՝ գլխադիր-Լրկաթադիր, գրելանյութը՝ սև մկան, բայց գորշագույն, ոչ ալքառու սև: Բառերը իրարմ անբաժան գրված են, կետադրութիւնը՝ ըստ այն ժամանակի հասկացողութեան: Ձեռագրի վերջավորութեան 264—267 թերթերը կրկնագրեր են, որոնց վրա այլ գրչութիւն մը՝ միջին մեսրոպյան երկաթագիր

ըստ Ն. Գասպարյանին¹. Բայց բոլորագրի հատկանիշներ ունի և ավելի ճիշտ պիտի ըլլար. եթէ զայն որպէս բոլորագիր ընդունինք, Այդ մասը հիշատակարան մը կներկայացնէ, որուն պիտի անդրադառնանք հաջորդ տողերուն մեջ: Նույնպես թերթ 200-ի բ էջի վրա Ղուկասի ավետարանի վերջամասը սրբված է և կրկնագրված է տգեղ բոլորագրով: Ավետարանի առաջին թերթը պարապ է և պահպանակ մը կներկայացնէ: Ձեռագրին մեջ մանրանկարչութիւն չկա, լուսանցքազարդեր գուրկ է: Խորանները նույնպես շին գծված: Էջ 1 ա—2 ա կիսախորաններ կպարունակեն, պարապ սլուծակներով, 2 բ, 3 ա, 3 բ ու 4 ա էջերուն վրա կիսախորաններ նկարված են, որոնց տակ էջերը ուղղաձիգ ու հորիզոնական կարմիր գծերով ազդուակներու բաժնված են՝ մոտավորապես քառակուսի կամ քառանկյուն: Ամեն սլուծակի առաջին քառակուսին մեջ առանձին-առանձին շորս ավետարանիչներու անունները գրված են, իսկ ներքև՝ ավետարանացույց գիրքը (տառեր) ու տառախումբեր: Կիսախորանները ուղղանկյուն շրջանակի մեջ առնված են՝ 17×4,5 սմ չափերով և իրարմ տարբեր նկարազարդութեամբ, որոնք պարզունակ ու հասարակ են, առանց մեծ գեղարվեստականութեան գրոշմի, դուլնը վառվառն չէ, այլ մթազնած: Օգտագործված գույները (ներկեր)՝ վարդագույն-կարմիր, սև ու մութ մանիշակագույն, որ մասամբ սըրճագույնի կհակի: Այդ ավետարանացույց՝ էջերը շրջանակով պարփակված են՝ մութ մանիշակագույն հաստ գիծերով:

Ավետարանը՝ 4-րդ թերթէն մինչ 263-րդ թերթը (բացառութեամբ 235-րդ թերթին) միօրինակ մաքուր ձեռագիր մը կպարունակէ: 169—170-րդ թերթերը ընդունված են որպէս մեկ թերթ: 200-րդ թերթի բ էջին վերևի մասի մաշված նախկին գրչութիւնը ավետարանացույցի հանգամանք ունի՝ անխնամորեն գրված: Սույն ձեռագիրը 264-րդ թերթէն մինչև 266-րդ թերթը խոնացած, ավելի հավանական է՝ սրբված, անընթեռնելի գլխագիր-երկաթագիր գրչութեամբ էջեր կպարունակեն, որոնց վրա հետագա ժամանակվա բոլորագիր ձեռագիր տողեր կան,

¹ Պուլկարական անուններու տառագարձութիւնը՝ ըստ արեւմտահայերէնի ձայնարանութեան—Ղ. Կ.:

² Տե՛ս «Հանգես ամսօրյա», Վիեննա, 1939, էջ 86—90 (Ցուցակ Հայերէն ձեռագրաց ի Պուլկարիա):

որ 6 սյունակներ կգրավեն և ավետարանը վերակազմողի հիշատակարանը կներկայացնեն:

Ավետարանի դասավորումը հետևյալն է. ըստ Մաթևոսի՝ էջ 4 ա—48 ա, ըստ Մարկոսի՝ էջ 84 բ—123 ա, ըստ Լուկասի՝ 123—200, ըստ Հովհաննու՝ թերթ 201—263: Բոլոր ավետարաններու սկզբին ու վերջավորության հիշված է ամեն մեկ ավետարանիչի անունը, այն տարրերով թվամբ, որ ավետարանի ավարտին վերանադիրը ու անունը ավելի մեծատառ գիրերով նշված են:

Այս ձևադրի արժեքը կկայանա ոչ միայն անոր հնագրության ըլլալու հանգամանքին մեջ, այլ առավել ևս անոր կցված հիշատակարանին համար: Այստեղ ավետարանը նորոգողը ու վերակազմողը հետաքրքրական տեղեկություններ կհաղորդեն պատմական անցուդարձերու մասին, որ ընդհանուր բնույթ ունին, հուզումնալից գրչով նկարագրություն կընեն քրիստոնյաներուն վիճակի՝ ներառյալ և հայերու մասին՝ իսլամ ցեղերու արշավանքներու և ներխուժումներու ժամանակ XIV դարու առաջին կեսին՝ հայկական հողամասերու վրա:

Ստորև հատված մը կներկայացնենք այդ հիշատակարանեն, որոշ կրճատումներով:

Եի նեղ և և ի դռն ժամանակիս յորում մեծ մայրաքաղաքն Թէոդաւսպօլիս³ անապատ եղև ի մարդոյ և անասնոյ ի յազգէն հագարու և ի սմայկացւոցն: Նայել արեւելեանքն ամենայն և տուն վրաց, որ յորովք ի սուր սուսերի մաշեցան և այլք ի սովոյ մեռանէին, որ ոչ կարէ պատմել զանցս աղետիցս զոր եկն ի վերայ ազգիս քրիստոնէից և այն վասն առաւել յաճախ մեղաց մերոց: Որ բաղում տանուտիարք և քահանայք մուրողք տարաշխարհիկ շրշէին ի հայրենի գաւառաց: Եւ ոչ որ լինեն արգանական դի հասարակաց էր վիշտն սովոյ և տաքնայն յանաստեած ազգէն:

Այդ եղև վերջին նորոգումն սուրբ աւետարանիս ի թուականութեանս Հայոց ՉԳ ի գաւառիս խաղտեաց. ի յանառիկ դղեակս որ կոչի Բարերդ. ձեռամբ սուտանուն սարկաւագի Յովհաննէսի Նաղաշի և կազմողի Առդրան սրբոյ աստուածածնի և սրբոց հրեշտակապետացս ... և ի հայրապետութեան այսմ գաւառիս տէրն Սահակայ և տէր Ստեփաննոսի, և ի թագաւոր(ութեան) հայոց Կոստանդի և յիշխանութեան աշխարհին հռոմաց, Ծարաթնային որ էր այր բարեպաշտ...:

Ըստ հիշատակարանի հաղորդման, ձեռագրի վերջին նորոգումը տեղի կունենա խաղտեաց

գավառի Բարերդ անառիկ բերդի մեջ՝ հայկական ՉԳ թ.՝ այսինքն 1346 թ. (795+551=1346), սարկավագ Հովհաննէսի կողմէ՝ Շիրինշահի (մեծատեր իմաստով—Հ. Կ.) թելադրութեամբ: Այդ վկայությունը ավետարանի նորոգության մասին ցույց կուտա թե՛ անոր գրչության ժամանակը պետք է որոնել նախորդ դարերուն մեջ, իրողություն մը, որ կհաստատվի ավետարանի բուն իսկ գրչի հակիրճ տեղեկութեամբ, որ կգտնվի 200-րդ թերթի բ էջին վրա՝ Սահակայ այդ հարցին պիտի մոտենանք քիչ հետո:

Ձեռագիր ավետարանի առաջին նկարագրության կհանդիպինք պրոֆ. Պենյո Յոնեի ձեռագրերու շառմաստիւթյան մեջ, ուր այն կհիշվի որպէս հայկական քառամետրան XIII դարին, համարակալված թիվ 580/163-ի տակ⁴: Այդ ձեռագրի քննութեան կապակցութեամբ հեղինակը մեջբերում մը կընեն հիշատակարանի մեկ հատվածին, որուն թարգմանությունը կպատկանի այն ժամանակվա Սոֆիայի հայկական եկեղեցվո քահանային՝ Մեսրոպ տեր Մեսրոպյանին: Այդ հատվածը թարգմանությունով բաժանված կներկայացնեն. իսկական ընդդրին համապատասխան չէ, առանց սակայն խնդարթութեամբ: Այդ թարգմանաբար ներկայացված հատվածին մեջ փոքրիկ վրիպումներ տեղ գտած են, որոնք թարգմանիչին պետք է վերագրել: Այսպես՝ հիշատակարանի մեջ հիշված քահանայի անունը Սահակ է, մինչ թարգմանության մեջ տպված է Սալակ, որ թերեմբերցումի արդյունք պետք է նկատել «Հ» գրին: Այդ գիրը տողի ստորամասին վրա գրված է ձեռագրին մեջ և անզգուշության պարագայի կարելի է որպէս «Հ» գիրը ընթերցել: Թարգմանության մեջ նորոգողի՝ Հովհաննէս անվանը կցված է «XII» (Հց) կրճատումը, որ հայկական բնագրին մեջ չկա: Անհիշտ վերարտադրված է ավետարանի նորոգման վայրմենաստանը. թարգմանիչը տառացիորեն թարգմանած է «Եի դրան սուրբ Աստվածածնի» և համապատասխան մասը պարզաբան տրված է «на вратата на св. Богородица» փոխանակ «в църквата св. Богородица» այսինքն՝ սր. Աստվածածին եկեղեցվո մեջ:

Պրոֆ. Պ. Յոնե բարեխիղճ նկարագրությունը կընեն ավետարանի (կազմ, լափ, տառատեսակ և այլն) առանց անոր բովանդակության

⁴ Бенъо Цонев. Опис на ръкописите и старопечатни книги на народната библиотека. София, 1910, с. 517 (№ 560/163. Четвероевангелие на ерменски от XIII век).

³ Թեոդոպոլիս—Կարին, էրզրում:

ուսումնասիրությունը կատարելու և այնտեղ հղած մանրամասները ցուցաբերելու Անկասկած այդ ամենը չէ կարելի պահանջել այս հմուտ ու ճանաչված պուլկար դիտնականն, որ հայերենին անգիտակ անձ մը հղած է: Հեղինակը ցույց չի տար թե՛ ուրկե՛ հեղած է այդ ձեռագիր ավետարանը և ինչպես հասած է Սոֆիայի ազգային մատենադարանը: Շատ հավանական է, որ տվյալներու ու փաստերու բացակայության բերումով այդքան հետաքրքրահան հարցեր հեղինակի տեսադաշտն դուրս մնացած են, որոն համար պետք չէ զինք մեղադրել:

Հայկական այս ավետարանի երկրորդ ուսումնասիրությունը կպատկանի դոկտ. Մանյո Սթոյանովին, լույս տեսած՝ «Ծուցակ հունական և ալլալեզու ձեռագիրներուն Սոֆիայի Վերդի և Մեթոդի» ազգային մատենադարանին մեջ⁵: Հակառակ այդտեղ նշված որոշ հավելումներուն, այս նկարագրությունը ևս չի շոշափեր ձեռագրի ներքին բովանդակությունը, առաջին հերթին՝ հիշատակարանները և հիշատակարանը՝ հեղինակին հայոց լեզվի անմատչելիության պատճառով: Այս ուսումնասիրողը կզոհանա նույնությամբ ներկայացնել հիշատակարանին մեկ հատվածի թարգմանությունը, ներառյալ և վերիակները, որ թարգմանիչին կպատկանին, քաղելով զայն պրոֆ. Պ. Յոնեի գրքեն, ընկու պուլկար հեղինակներն ալ հենելով ավետարանի նորոգման թվականին վրա—1346 (այս թվականը անոնց մոտ 1347 տարեթիվը կկրե— Ղ. Կ.), ենթադրաբար դար մը ետ կնշեն անոր ստեղծման ժամանակը, այսինքն XIII դարի իրենց համար գաղտնիք մնացած է մագաղաթյա այս ձեռագրի գրության բուն թվականը, որուն մասին հիշատակում կա 200-րդ թերթի բնի վրա:

Հայ ուսումնասիրողներու ուշադրությունն չէ վրիպած այդ հնադարյան հայկական ավետարանը և անոր մասին առաջին տեղեկությունը կգտնենք Ղ. Քյուրտյանի մոտ⁶: Ան առանց անդադառնալու ձեռագրի ամբողջության վրա, կներկայացնե միայն հիշատակարանը: Զեռագրի կապակցությամբ մասնավոր տեղեկություններու լենք հանդիպի հեն, ոչ ալ ուսումնասիրության առարկա կդարձնե հեղինակը այդ

ավետարանը: Նույն հեղինակը⁷ քանի մը տարի անց կուգա ընդլայնելու հայագիտական շրջանակներու համար այդ ավետարանի մասին գոյություն ունեցած համառոտ գաղափարը: Ուսումնասիրելով ավետարանի բովանդակությունը, Ղ. Քյուրտյան առաջին ցույց կուտա անոր գրության իսկական թվականը՝ ՆժԵ— 966 և մեջբերում մը կընե գրքի առաջին գրչի հիշատակարանի, որմն դժվարությամբ կհաշտի ընթեռնուլ 7 տող: Այլ բացատրություններ ավետարանի մասին կպակսին, քանի որ հեղինակի նյութը ձեռագրի ուսումնասիրությունը չէ, ալ համառոտ ակնարկ մը պուլկարահայության պատմության վերաբերյալ:

Այդ հայկական ավետարանի լավագույն ուսումնասիրությունը կպատկանի պուլկարահայ բանասեր, պուլկարահայության պատմության, մամուլի ու մշակույթի քաջատեղյակ հանգուցյալ Ներսես Գասապյանին⁸: Ան Պուլկարիո մեջ ի հայտ բերված հայկական բազմաթիվ ձեռագիրներու ուսումնասիրության շարքին՝ հիշատակում ու բարեխղճությամբ նկարագրությունը կընե հիշյալ ավետարանին և հանգամանորեն կանգադառնա անոր բովանդակության վրա: Շնորհիվ այս նոր ուսումնասիրության անգամ մը ևս կպարզվի, որ Սոֆիայի ազգային մատենադարանի միակ ձեռագիրը ստեղծված է հայկական ՆժԵ թ., որ կհամապատասխանե 966 թ. մեր նոր տոմարով, այսինքն X դարու երկրորդ կիսույն, Կիրակոս երեցի կողմից ի հաստատումն այդ իրողության հողվածի հեղինակը պատճենը կներկայացնե՝ կկցե իր գրության՝ ավետարանի առաջին գրչի հիշատակության, որ ինչպես արդեն հիշեցինք, կգտնվի ձեռագրի 200-րդ էջին վրա: Այդ հիշատակումը կընդգրկե ընդամենը 10 տող, որոնցմե միայն առաջին 8 տողը մասամբ կարելի է վերծանել, գրերու դժվար ընթեռնելիության պատճառով: Այս հայ հեղինակներու նույնաման ստուգումները անվիճելիորեն կհաստատեն, որ ձեռագիր-ավետարանը X դարու գրչության է: Մեր պրպտումներու ժամանակ նույն եզրակացության հասանք: Այս պարագան գյուտ մըն է ոչ միայն հայ մատենագրության համար, այլև Սոֆիայի ազգային մատենադարանի համար, քանի որ ան կներկայանա այդտեղի միակ ամենահին ձեռագիր դիրքը ամբողջու-

⁵ Sб'у Маньо Стоянов. Опис на гръцките и други чуждозеични рѣкописи на Народната библиотека «Кирил и Методий». София, 1973, с. 187.

⁶ Sб'у «Հանդես ամսօրյա», 1926, էջ 344—345:

⁷ Sб'у «Մասիս» տարեգիրք, Սոֆիա, 1935, էջ 190—191:

⁸ Sб'у «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1939, էջ 86—90 (Ծուցակ հայերեն ձեռագրաց ի Պուլկարիա):

թյամբ պահված, Այս վերջին հաստատումը կընենք հիմք ունենալով մեր պրպտումները Սոֆիայի ազգային մատենադարանի ձեռագիրներու ցուցակներուն և ուսումնասիրության 4 հատորները՝ հեղինակ Պ. Ցոնե 2 հատոր (1910, 1923) և Մանյո Սթոյանով ու Խրիսթո Ցոտով 2 հատոր (1964, 1971)։ Պետք է ընդգծել նաև, որ հայկական այս ավետարանը կհանդիսանա ամբողջ Պուլկարիս հեռագրային քվակաճագրված լրիվ, ամբողջությամբ պահված ձեռագիրը, քանի որ ամենահին ձեռագիրը պուլկարական հոգևորու վրա մինչ ցարդ ցույց կտրվի Սինյայի ավետարանը XI դարին (Енинското евангелие XI век)։

Ն. Գասպյան հայկական այդ ձեռագրի իր ուսումնասիրության մեջ չի մատնանշել անոր հայտնաբերման հանգամանքները, թվականը ու վայրը։ Հավանական է, որ իր աչքին վրիպած ըլլա Վերթո Ցորտանովի գործը⁹։ «Սոֆիայի ազգային մատենադարանի պատմությունը՝ անոր 50-ամյա հոբելյանին առթիվ, 1879—1929»։ Վերոհիշյալ աշխատության 150-րդ էջին վրա հայկական ավետարանի վերաբերյալ հետաքրքրական տեղեկություններ կան, որոնք կըփաստեն անոր հայտնաբերման և մատենադարանին հանձնելու պարագաները։ Հաստատելու համար այս մեր նշումը, ստորև կուտանք այդ էջի համապատասխան հատվածի թարգմանությունը. «...իսկ ժողովրդական լուսավորության նախարարությունը նույն տարվա (1892—ձ. Կ.) նոյեմբեր ամսվա մեջ ցուցակով (Սոֆիայի ազգային մատենադարանին—ձ. Կ.) 26 հատոր հին ձեռագիր գրքեր կուղարկե, որ նախապես ստացված են հղեր Փոլսի միջին հասնադարական, գտնված ըլլալով Պաշտոնյի վանքին մեջ¹⁰։ Այդ ցուցակի վերջավորության (ցուցակը լրիվ զետեղված է վերոհիշյալ աշխատության մեջ—ձ. Կ.) հիշատակված են երկու հայկական վերնագիր»։

25. Հայկական եկեղեցական գիրք՝ մագաղաթի վրա գրված։

26. Հայկական եկեղեցական գիրք, որմն ըլլալը անհայտ։

Հարկ կնկատենք ճշտում մը կատարելու։ Վերջին ձեռագիրը, մատնանշված 26-րդ համարին տակ, սխալմամբ ցույց տրված է որպես

հայկական ձեռագիր՝ անկասկած ծառայողներու լեզվական սահմանափակության պատճառով։ Իրականության մեջ ան վրացական ձեռագիր մըն է, որ ավելի ուշ ուսումնասիրության առարկա կդառնա և կստուգվի։ Ան Պաշտոնյի վանքի հիմնադիր հայազգի Գրիգոր Բակուրյանի «Սահմանք»-ի (կանոնագրության) վրացերեն նախաօրինակի ընդօրինակումն է, կատարված 1702 թ. Հովհան Մարգոսյանի կողմից՝ Ախալցխային, Ըստ ձեռագրի ծանոթագրության, որ կնշն նաև Մանյո Սթոյանովը իր «Ցուցակին» մեջ, հիշենք, որ ան մագաղաթյա չէ, այլ թուղթի տետրակ մը լայնագիծ, 65 թերթ 15 պարագ թերթ 21×17,4 սմ չափերով, որուն նկարագրությունը կատարած է Մ. Սթոյանով իր աշխատության մեջ։

Վսեմուղտ Իվանով, այլ պուլկար պատմության մը, իր ստորագրած մեկ հոդվածին մեջ¹¹ անդադառնալով նաև այդ խնդրո առարկա 2 հայկական կոչված ձեռագիրներուն, ստուգորեն կփաստե, որ 26-րդ համարին տակ որպես հայկական նշված ձեռագիրը վրացական է և այն ալ Պաշտոնյի վանքի «Սահմանք»-ի վրացական մեկ օրինակը։

Կասկած գուրս է, ուրեմն, որ հայկական ավետարանը, որ հիշյալ ցուցակի 25-րդ համարին տակ նշված է, Պաշտոնյի վանքին առնված է (այս իրողությունը կհիշե և դոկտ. Մանյո Սթոյանով, առանց մատնացույց ընելու իր տեղեկության աղբյուրը)։

Ծրբ, ինչպես և որո՞ւ միջոցով այդ հագվազյուտ հայկական ավետարանը հասած է Պաշտոնյի վանքը, առեղծված կմնա։ Միայն կարելի է որոշ ենթադրություններ ընել, առանց փաստել կարենալու, տվյալներու և փաստաթղթերու չգոյության պատճառով։ Նկատի ունենալով այդ ավետարանի նորոգության թվականը՝ 1346 ու վայրը՝ Բարերդ, որ այն ժամանակ կրած է վրացական եկեղեցիի ազդեցությունը, հավանական կգտնենք, որ ձեռագրի փոխադրումը պուլկարական հողի վրա եղած ըլլա քաղկեդոնական հայու կողմից (հոգևորական կամ աշխարհական), այցի կամ վանքի հաստատման ժամանակ՝ նախքան թրքական իշխանության լրիվ տարածումը Պուլկարի մեջ՝ 1393 թ.։ Հիշենք, որ ըստ պատմական տվյալների և Փոլսի միջին շրջանը, ներառյալ և Պաշտոնյի վանքը, թրքական տիրապետության տակ ինկած են 1353 թ.։ Հնարավոր է ձեռագրի փո-

⁹ В. Йорданов. История на народната библиотека в София по случай 50 годишнинатай 1879—1929. София, 1930. с. 150.

¹⁰ Պաշտոնյի վանք, որ համանուն գյուղի մոտ կգտնվի, ժամանակին կոչված է Փեթրիցիների վանք, իսկ գյուղ՝ Փեթրիցիոն։

15 «Հանգես», № 1

¹¹ Сл. Съдбата на типика—устав на Григорий Бакуринан (Пакуринян), сп. Известия на института за Българска история. София, 1951, с. 266.

խաղրուվել Պաշտովոյի վանք կատարված ըլլա XVII դարին հետո, քանի որ XV—XVI դարերու ընթացքին վանքի ավերման ու անկման շրջանը եղած է:

Հայկական ավետարանի առկայությունը Պաշտովոյի վանքին մեջ ենթադրել կրնա տալ անոր զործածության հավանականությունը և ան մի զույգ արձագանք մըն է այն ժամանակա- ընթացքին, երբ այդ վանքը վրացահայ կրոնա- կան ու մշակութային միջավայր մըն էր, ուր ոչ միայն վրացերեն ժամերգություն կար, այլև հայերեն: Այս իրողության ուշադրություն դար- ձնելու է Պ. Մ. Մուրադյան իր հոդվածին մեջ¹², ուր կշիռն են՝ ըստ վանքի «Սահման- ք»-ի հանական օրինակի 15-րդ գլխի կետ 17-ի, որ Թարգմանարար կենդանացնե, եղած

է և հայերեն ժամերգություն: Այս ձևով հայ պատմաբանը, փաստարկելով զույգ լեզունե- րով ժամերգության սահմանումը, կովան մը ևս կընծայե, որ Պաշտովոյի վանքի հոգևոր կազմին մեջ եղած են և հայ վրացազավաններ (քաղկեդոնականներ):

Անկասկած, հայկական ավետարանը իր հը- նությունը բացառիկ զանձերեն մին է Սոֆիա- յի ազգային մատենադարանին և X դարու հնա- զույն հայկական սակավաթիվ ձեռագիրներու շարքին հազվագյուտ օրինակներեն, որ պատ- մական արհավիրքները զայն խաղաղ միջավայր մը նետած են՝ Պաշտովոյի վանք՝ պուլկարական հոգի վրա:

ՀԱՅՈՐ ԿԻՆԿՅԱՆ (Պլովդիվ)

АРХЕОЛОГИЧЕСКАЯ НАХОДКА В СЕЛЕ ХАНАБАД

В июне 1990 г. в Государственный историко-краеведческий музей Арцаха поступило сообщение о том, что в юго-восточной части села Ханабад Аскеранского района, в местечке Тунни бахи тап, в непосредственной близости от автодороги Ханабад-Храморт при строительстве кооперативного завода по изготовлению кирпича были обнаружены кости и отдельные черепки от сосудов. При осмотре местности выяснилось, что строителями было почти полностью разрушено погребение. Положение костяка с достоверностью определить не удалось. На месте сохранились лишь часть черепа и локтевой кости. Наличие других погребений не установлено, хотя на стройплощадке встречаются фрагменты керамики, в основном чернолощеной. Нами был заложен пробный шурф, в котором на глубине 20 см от поверхности (от уровня дороги—220 см) были обнаружены хорошо сохранившиеся бронзовые кинжал и вток копья (или навершие жезла), большой кувшин шаровидной формы, глиняная подставка, зооморфный сосуд в виде водоплавающей птицы, сердоликовые бусы, а также черепки орнаментированного сосуда.

Кувшин безручный с шаровидным корпусом, большим плоским дном, низкой

шейкой, среднешироким горлом, слегка отогнутым наружу профилированным венчиком. Глина мелкозернистая, без примесей, обжиг равномерный, черепок в изломе имеет коричневый оттенок (табл. I, I, рис. 1). Изготовлен на гончарном круге. У дна кувшина видны следы копти. Верхняя часть корпуса сосуда орнаментирована несколькими горизонтальными парал-



Рис. 1

лельными вдавленными линиями, образующими пояс. От венчика к этому поясу нисходят вертикальные лощенные полосы. Подобная керамика характерна для погребальных комплексов Реджин-лагеря, датируемого XII—XI вв. до н. э.²

¹ А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 199—200.

² Г. Е. Арешян. О раннем этапе освоения железа в Армении и на Южном Кавказе.—Историко-филологический журнал, 1974, № 2, с. 194.

12 Պ. Մ. Մուրադյան. Գրիգոր Բա- կուրյանի «Սահմանք»-ի հանարեն և վրացե- րեն խմբագրությունների զեահատության հար- ցի շուրջը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1: